


792(47..925)  
4-41







02 NOV 2

4-41  
79247925

11-41

ԱՐԵՎԱԿ

ՅԻՒՆԱՄԵԱՅ

ՅՈՐԵԼԵԱՆ

1912

Թրակ Կարօնի



30

792(47.925)

4-41

20

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄՆԱԿԵՑՄԵՒ  
ԾՆԵԱԼ ՊՈԼԱԹ

25

Printed in Turkey

1839



Ի ՅԻՇԱՏԱԿ

իր բեմական գործությունների ամենամեծ համամետակից

1857—1912



Տպագրութիւն Ա. Շահնշահ Կարօնական Ա. Պոլիս

1912

# ՄԱՐՏԻՐՈՍ ՄՆԱԿԵՑՄԱՆ

Մնակեան՝ 1839 թուականին ծնուծ ու Պալաթի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին մկրտուած է : Կոքահայրը, ո՞վ գիտէ ո՞ր պարզամիտը, կարծես գուշակելով Մնակեանի կեանքին ապագայ նահատակութիւնը, զայն ի ծնէ մկրտեր է ՄՄ.ՌԾԻՐԾՈՒ անունով :

Մնակեանի ծնողքը՝ աղքատ դասակարգի ընտանիք մը, քիչ ժամանակ վերջ մը փոխագրուին Խասգիւղ : Հնու Մնակեան կը մտնէ Ներսէսեան վարժարանը, և իրեւ պարտածանաչ տղայ, իր աղքատ ծնողաց բեռ չըլլալու համար, դպրոցի ժամերէն դուրս, առառու իրիկուն, իր հօրը գործին ալ կ'օգնէր, անոր կարած բանթալօններուն կոճակները կարելով : Զը մունանք ըսել թէ Մնակեանի հայրը զինուորական դերձակ էր : Մարտիրոս Մնակեանի իր մօրն ալ կ'օգնէր իրիկունները տան համար պէտք եղած ջուրը կրելով :

Այդ շրջանին Խասգիւղի Ներսէսեան, Սամաթիոյ Սահակեան և Սկիւտարի Ճեմարան վարժարաններուն ոսկեղինիկ դարն էր :

Մարտիրոս Մնակեան իր նախակրթութիւնը ստացած է Տիրացու կուղ Կարապետէն, որ գեռ ուրիշ շատ մը նշանաւոր սմանաւորութիւններու ձեռքը ուսման բանալին տուած է . ինչպէս Վարժապետեաններ, Պէրպէտեաններ, ևն . ևն . :

Ուշիմ ու յաջողակ տղայ, Մնակեան շատ շուտով ծաղկոցէն կ'անցնի ուսումնեարան սրանը, և իր աշխատամիրութեամբ բոլոր դասաստուներուն համակրանքին արժանի կ'ըլլայ . մանաւանդ Ներսէսեան վարժարանի տեսուչ՝ Լուսանողի Պատուելի Թորոս Զօրակեան Սենեկայամոլ(\*), մասնաւոր գուրգուրանք ու համակրութիւն մը ունեցած է դէպի իր այս աշխատասէր աշակերտը, այնպէս որ ամէն տարի Ս. Ծնողեան և Ս. Զատիկի առթիւ, Մնակեան իր երկու ձեռք նոր հագուստը կ'ստանար իր տեսուչէն : Սրդէն դպրոցական պիտոյքը և ցերեկուան ճաշն անգամ վարժարանէն կը հոգացուէր :

Կաղանդի օր մը՝ Մնակեան, հակառակ օր ինք ոչինչ ունէր իր Պատուելի Թորոսին նուէր տալիք, ըստ իր սովորութեան, ամէնէն առաջ փութացած էր աջանամբոյրի : Թորոս Պատուելի կ'ըսէ «աղայ, քիչ մը ետքը եկուր, տակաւին սիմբան չունիմ» ,

(\*) Պատուելի թորոս շեմ սիրող մը ըլլալով փիլիսոփայութեան զիւեր ցուկ կը կարգա Հռովմայեցի հաւասան Սենեկայի փիլիսոփայական եւկեր :

Մնակեանի ծնողքը սասափիկ ծանձրացած չքաւորութիւնէ և զիւենք շրջապատող — աղքատի հարսաւութեանէ — զաւակներէ, գէթ շաբաթական երկու օխա հաց օգտուելու համար, տասներեք տարեկանին կը հանեն զինքը դպրոցէն, և աշկերտութեան կուտան իրնոց դրացիներէն, Այլան Աէրայ աշխատաղ, տէյիրմէնձի Մանուկ ալայի քով : Մնակեան այսպէս երկու ամիսի չափ շարունակելէ վերջ, առառ մը բարեպաշտութիւնը կը բոնէ ու եկեղեցի կը մտնէ, գէմքն ու ձեռքերը մուրոտ, կրնակը անեմ կեօնիկի մը, գլուխը մուրոտ ֆէս մը, վերջապէս այնքան զէ վիճակի մէջ որ, ամօթէն չը համարձակիր տաճար մանել ու գաւիթը կը կինայ : Պատուելի Զօրակեան, ահանելով Մնակեանը այդ անտանելի վիճակին մէջ, իսկոյն քովը կը մօտենայ ու կը հարցնէ, «Ծօ՛ Մարտիր, այդ ի՞նչ վրայ զլուխ է . զուն ո՞ւր ես» : Մարտիրոս Մնակեան այնքան յուղիչ կերպով կը նկարագրէ իր վիճակը, որ Պատուելի Զօրակեան բղձկելով, կը բոնէ Մնակեանի ձեռքէն և ուղղակի Աղաներուն քով տանելով կ'ըսէ՝ «Աղաներ, այս աղան բաւական յաջողակ տղայ մըն է, ապագային բան մը ըլլայ կը խստանայ, աղքատութեան պատճառով զրկումի դասապարտուած է . այս աղան աղատեցէք» : Իսկոյն Պուռաւունսըգեան Եղբարք Յակոր և Յովհաննէս, Հովուեան կամ Էքմէքիպոչեան Պետրոս (Հայր Խաչիկ էֆ . Հովուեանի, այժմ վասարան Աղբահանւապուսի մէջ) կ'ստանձնեն գործը, և ժամկոչին միջոցաւ կը կանչեն Մնակեանի ծնողքը, և նիւթական պղտիկ օգնութիւն մը խստանալով, Մարտիրոսը կ'առնեն իրենց պաշտպանութեան տակ և ամիջապէս կը զրկին զայն բազնիք . հագուստ ու ձերմակեղիներ կ'առնուին, և Մնակեան այդ օրէն կ'ըլլայ Հովուեաններու պաշտպանեալը, Հովուեան Խաչիկ էֆէնարիի զրեթէ եղբայրազիրը . որուն հետ արդէն դասակից, կ'ըլլայ նաև անոր բաղդակիցը :

Մնակեան ցարդ միշտ երախտազիտութեամբ կը յիշէ իր փրրկիչ — բարերարը :

Մնակեան՝ արդէն աշխատասէր, այդ թուականէն կ'սկսի ա՛լ աւելի եռանդով աշխատիլ իր տաճար : Մնակեան իր բոլոր դասերուն մէջ միշտ յաջող, մասնաւորաբար առաջնութիւն շահած էր մա-

թէմաթիքի ճիւղերուն մէջ : Ուսումնարանի առաջին դասարանին մէջ , Մնակեան և Մկրտիչ Վարժապետեան (եղբայր Ներսէս Վարժապետեան Պատրիարքի) չափագիտական այն տեսակ կնճռուս խընդիրները կը լուծէին որ երբեմն ուսուցիչներն անդամ մէջէն չէին կրնար ելլեւ : Երկուքն ալ ջերմ չափագէտներ , մըզլւուաները ձեռքերնին , շարունակ Խափիւղի շրջակայ լեռները կը չափէին , թիթեղնանով մեքենաներ կը շինէին :

Այսպէս հինգ տարի չարունակելէ վերջ , Մնակեանի սրոշ սպաններէն երկուքը կը մեռնին , երրորդը նիւթական ձախորդութեան կը մասնուի : Բայց Մնակեան արդէն փրկուած էր : Իր անխոնջ աշխատութեամբ ամբարած ուսման շնորհիւ , փոքրիկ գումարի մը փոխարէն սկսած էր վարժարանին մէջ իրեւ կրկնիչ - ուսուցիչ դասախոսի . մէկ երկու թաղերու ալ այցելու դասախոս էր :

Ճիշտ այդ միջոցներուն վարժարաններու մէջ սկսած էր թառերական եռանդ մը արծարծուի : Շատ մը թաղային վարժարաններու մէջ աղաք պղտիկ ներկայացութեան կը սարքէին , մասնաւոր հանդէսներու առթիւ : Սուաջին օրինակը տուած էին Միջադիւղի Հայ-Հոռմէական վարժարանի ուսուցիչներն ու ուսանողները , առաջնորդութեամբ Պէտքթաշլեանի և իր ընկերը Յերէ Սնաուն Վարժապետի : Ներկայացուած խաղերն էին Պէտքթաշլեանի պղիրդութիւններէն Արշակ Բ . , Կունակ , Ան . Ան . : Դարձեալ Միջադիւղ Ազգ . վարժարանին մէջ երեկոյթներ կը սարքէին Թովմաս Պետեանց և ընկերներ :

Եեմը սիրողներու այս խումբը կը կազմէին , Պետրոս Մազաքեան , Զամաշըրճեան , միակ զերասանուի էքչեանի քենին Օր . Ֆաննի , առաջնորդութեամբ Ստեփան Էքչեանի : Ծանօթ գրագէտ Մրապին Հէքիմնան ևս կ'օգնէր սոյն ներկայացութեան :

Այս խումբը , որ սուաջին անդամ Թրքերէն լեզուաւ Երջանկացիատակ Սուլթան Մէճիտ Կայսեր ներկայացութեան ներկայացուց «Տօն Կրելօրի» գօմէտին Յ արար , և «Օտուն Գրլին» ֆարս մէկ արար , ընդունելութեան չ'արժանացաւ :

Միկային ատեն Գուղկունձուքի Ազգ . վարժարանին մէջ ներկայացութեան կը սարքէին Պատակեան եղբարք , Սիսակ և ուրիշներ :

Խափիւղի ներսէսեան վարժարանին մէջ Մնակեան , Թիւլպէնաւն եղբարք և ուրիշներ : Այս խումբը իրեն գերտառոց ունէր Գարեգին Զամարտանեան , կը ներկայացնէին Միրզա Վանանդեցիի (Զմիւնիացի) երկերը , Միրզատ , Ան . Ան :

1857ին Յերայի արուեստանէրները կը պատրաստէին Խտալերէնէ թարգմանուած Արխանտեմ ողբերգութիւնը , որուն մէջ աղջկան գեր մը կար՝ Կեսիրա , բայց գերասանուահի չկար : Մնակեան կը հրաւիրուի ստամննել սոյն գերը , Փորձերը կը կատարուին , և վերջապէս Յերա Նաում թատրոնին մէջ , Մնակեան ճիշտ 1857ին առաջին անդամ ըլլալով , իբր գերասանական խումբի անդամ , իբր ԱՆԴՐԱՆԻԿ ներկայացումը կուտայ , և առաջին անդամ ըլլալով իբր գերասան սուք կը կոխէ բեմ :

Մնակեան՝ իր գերասանուահի գերին՝ Կեսիրաի մէջ , երկար կեղծամբ , Խօմէն Ֆիխրան հագած , կազմ ու պատրաստ է , Վարագոյրը կը բացուի . բեմ մանելու կարգը Մնակեանին է : Արխանտեմ՝ այսինքն Էքչեան բեմը կ'սպասէ , և Մնակեան իբր կրտսեր աղջիկը , «Հայր իմ» բանելով գէպի Էքչեան պիտի վազէ . բայց Մնակեան գուլիսին մէջ անշարժ , քարացած մնացած է : Էքչեան բեմէն աչք կ'ընէ , Մազաքեան «Չուտ ե՛լ» կ'ըսէ . բայց անօգուտ . Մնակեան անշարժ ու խուլ է : Մազաքեան ճարանչատ ահագին կից մը կուտաց Մնակեանի հաներին , և Մնակեան ինքզինքը բեմին վրայ կը գտնէ : և առանց զգալու , «Հայր իմ» պուալով կը փաթթուի Էքչեանի :

Այդ վայրկեանին կը պատսի Մնակեանի երեսին քողը , և Մնակեան այլեւ Աներին մը եղած էր :

Այդ նշանաւոր օրը ուրիշ միջադէպ մը ևս :

Թատերախաղին համեմատ , Արխանտեմ՝ երրորդ արարին , իր սպաննած աղջկան զերկմանին մէջ կը մանէ , թշնամույն սալմը իր աղջկան արգանդին մէջ փնտուելու համար , և յետոյ խելագարած դուրս պիտի զայ : Պերկեմանին մէջ մնացած երկու երեք տեսիլի միջոցին , Էքչեան կը նեղանայ և կ'ուղէ սիկառ մը ծխել ու մօրուքը կը հանէ : Յանկարծ կը դիսէ որ իր ժամանակին է . աճապարանքէն կը մունայ մօրուքը անցնել և առանց մօրուքի բեմ կը վազէ :

Բառատիի չարաճճները կ'սկսին «Ա. Փաստ» . Արխատուէմ ցաւէն մօրուքը փետակեր է» պուալ :

Նառամի թատրոնը՝ Յերա Կալախտ Սէրայի մօտ այժմու Խրիսթագի բասաթին տեղն էր :

Այս թատրոնին տէրն էր Դամասկոսի Հոռվմէական Սրար մը նառամ անուն , որ որոշ ժամանակամիջոցի մը համար առանձնաշնորհնեալ էր , և Սուլթան Մէճիտ Կայսեր օրոյ ու է լեզուով ուրիշ ոչ մէկ թատրոն կրնար հիմնուիլ Պոլսոյ մէջ :

Նառամ՝ Խտալական օբէրայի ամենալնտիր խումբերը կը հրաւի-

բէր Պոլիս, և մեծ ու ընտիր օբերաներ կը ներայացուէին, ինչպէս Թրավիարօն, Թրավիարա, Ուն Պալօ ին Մասէեա, ևն. ևն; Ամէն տարի թատերական շրջանին մէկ անգամ Սուլթան Մէջիտ Կայսրը իր Կայսերական ներկայութեամբ կը պատուէր խումբը:

Արիստոնի սոյն ներկայացման յաջորդ առառւն ջոջ դերասանները կը հաւաքուին, հին Լիւքսէմպուրկի սրահը, հաշիւ տեսնելու, Մնակեան, երկար սպասումներէ վերջ, Մաղաքեանի միջոցաւ կ'ստանայ իր բաժինը, պղինձ դրամ հինգ հարիւր զրուշ, տոպրակ մը լցուն դրամ: Մնակեան իր հարստութիւնը շալկած կը հասնի Խասդիւլ, և կ'սկսի իր երեակայութեամ մէջ մեծցնել դերասանութիւնը: Ի՞նչ շահաւոր դրոծ: մէկ գիշերուան մէջ հինգ հարիւր զրուշ: Մնակեանի ախորդակը այնչափ սրուած ու բացուած էր որ ա՛լ վերջնականապէս իր մտքին մէջ վճռած էր իր ասպարէզը, Դերջութիւնը:

Ճիշտ նոյն միջոցին Ալթունեան եղբարք Խասդիւլ Ներսէսեան վարժարանի ետեի փողոցին մէջ կը կանգնեն թատրոն մը, Խասդիւլցի երիտասարդներուն համար:

Երբե դերասան և դերուաոյց կը հրաւիրուին նուե Բերայի խումբն էքչեան և Մաղաքեան:

Առաջին խաղն էր Մխիթարեաններու երկերէն «Անիծեալ Ընտանիք» անուն կատակերգութիւնը. հինգ արար: Թատրոնը լցուած էր հոծ բազմութեամբ: Ամիրաններէն ձանիկ և կէլկէլեաններ ներկայ: Ամէն կերպով փայլուն և յաջող երեկոյթ մը: Բայց երկորդ ներկայացումը անկարելի կը դառնայ, որովհետեւ նառւմ դատ բացած էր: Մէկ քանի շաբաթ դադարէ վերջ, որ մը հրշէց պալրանիներ, պաշտանական մարմինի մը առաջնորդութեամբ քարուքանդ կ'ընեն թատրոնը:

Ալթունեան եղբարք առանց վճառելու, սոյն դէպքէն ճիշտ երկու տարի վերջ, 1859ին, ա՛լ աւելի եռանդով ու լրջօրէն կը փարի գործին, և այս անգամ Բերա՛ Նառմիթ թատրոնին կից, այժմու Թօգամիեանի շնորին տեղ, կը հիմնեն «Արեելեան» անուն Հայ թատրոնը, ընկերակցութեամբ Մէրնէմպուլներու, Գրիգորիկ Խուրտաձեանի, Սբրահամ Նարինեանի, Գրիգոր Յրէնկեանի, և Ռուբէն Հիւսէյին ճիւսէյին ճեանի:

Խասդիւլէն իրը դերասան կը հրաւիրուին Մնակեան, Ֆասուելեան և Սէտէֆճեան, Բերայէն՝ էքչեան, Մաղաքեան, Պէնլեան, Թրեանց, Զերաջի, Լճեցի, իրբե դերասանուհի՝ Տրավոնցի:

Պ. Անուշեանի խօսեցեալը՝ Պոլսեցի Օր. Արուսեակ Պէզիրճեան և քոյրը Աղաւնի, և քիչ յետոյ ալ Օր. Եպրոս Կէօմըրիւկճեան: Դերուաուց՝ իտալացի ծերունի դերասանապետ Պ. Ասթի:

Առաջին ներկայացում՝ «Երկու Յիսոնապեսներ», արամ երեք արար և «Ցուկինելլա կամ Տէրլ Ծառայ՝ Ծառան Տէր անուն մէկ արար զաւեշար:

Մնակեան ինք կը պատմէ թէ՝ թէ թէ կամ բազուկներու ինչ անազին շարժումներ, ինչ այլանդակ քայլեր ունէին այն ատեն իրենք: «Սարսափահար հայեացքներ կը նէտէինք իրարու, կ'ըսէ որոտաձայն կ'ոռնայինք. կ'երգէինք և ոչ թէ կը խօսէինք. բերաննիս կը խօսէր, դէմքերնիս չէր խօսեր. կը խօսէինք և ոչ թէ կը խաղացինք»:

Եկունի դերասանապետն Ասթի, երկարատեւ ու համբերատար յոդնութեամբ, դերասաններու թէ երբ կապելով, քայլերնին ուղղելու համար բեմին վրայ կաւեճով ճամբաններ գծելով, կրցած և քիչ շատ կարգի բերել այս ինքնաբուս դերասաններու խումբը: Հապա Հայերէն լեզուն ո'չափ զօրաւոր կը հնչէր Խտալացի վարպետին ականջին: Շատ անգամ խեղճ ծերունին կ'աղաչէր որ քիչ մը քաղցր արտասանեն բասերը, Անգամ մը Լճեցի գերի մը մէջ, «Եւ բարկութենէն ինքընքը զարկաւ» կ'լսէ. Խտալացի վարպետը ականջները զոցելով կը հարցնէ յանկարծ՝ «Գօզա և զուխրօ զինկը զանկը»:

Արագէս անիսնչ աշխատութեամբ օրեր ամիսներ կ'անցնին: Ալթունեան եղբարք, Թէրգեան, Թղլեան հեղինակութիւններ և թարգմանութիւններ կը տեղացնեն, և խումբը սկսած էր հետզհետէ մեծ համակրո թիւն շահիլ հանրութենէն, այնպէս որ ամէն ներկայացման, Պոլսոյ ամէն թաղերէն, Գումզարուէն, Ամամթիայէն խուռն բազմութիւն մը Բերա կը դիմէր, և ներկայացումի աւարտելուն՝ վերագրածողներու լապտերները աստեղացին կամար մը կը կազմէին ճամբուն վրայ:

1859-1860ի թատերական եղանակը լրացած և ամառը եկած էր: Խումբը դարձեալ ամիսի էր, որովհետեւ ամառուան մէջ, դերասանները կէս ամսականով փորձ ընելու պարտաւոր էին: Պատմական հագուստներու, կան կարասիներու համար, անազին գումարներ կը ճախսութիւն:

Երենց արուեստի գիտակցութեամբ, Օրիորդ Արուսեակ, Մնակեան, էքչեան, Մաղաքեան, Յովհ. Աճէմեան թատերասէրներու պաշտելի դարձած էին այլեւ. իսկ Պէնլեան, Ֆասուելեան,

Թրեանց, Զերաջի, Լճեցի, Միբասեէտեան, Օր. Աղաւնի և Օր. Կէօմրիւքնեան այդ ասաղերուն շուրջը դարձաղ մոլորակներն էին:

Վիթօռ Հիւկօյի փայլուն ժամանակին էր, և խումբը մեծաւ մասամբ կը ներկայացնէր Հիւկօյի գործերէն՝ «Աննելո Մանիթիերի»։ և Լիւրէս Պօրնիա » Նիւէրի «Աւազակները» Պէշիքթաշչեանի երկերը, Սրապիսն Հէքիմեանի «Հարվակ Աւչուննը», Թէրդեանի «Սանդուխսը»։

Մնակեան ցարդ հոգիի թրմուպումով կը յիշէ, «Լիւրէս Պօրնիա»ի մէջ «Ճենարօ»ի մէջ «Ռոօօլիօ»ի դերերը, զորս այնքան յաջողութեամբ կը ներկայացնէր ինք։

1860ին, Արեւելեան Հայ թատրոնի երկրորդ շրջանը սկսելուն, խումբին վրայ աւելցած էին Տոմինեան և Տիկին Մարիամ Ծաղիկեան։ Այս շրջանին վերջները իբրև յիշատակնելի միջադէպ, Մնակեան կը պատմէ հետեւեալ դէպքը։ Գիշեր մը խումբը պիտի ներկայացնէր «Նելի Աւարալիր»։ Այդ միջոցներուն ազդ շրջանակներու մէջ ահագին իրարանցում մը կար Հասունեան և Անթիհասունեան ինդրոյն շուրջ։ Դարձնեալ այն միջոցներուն էր որ դեռ նոր սկսուած էր երգուիլ Պէշիքթաշչեանի «Եղրայր հնք մննք» երգը, և մեծ ջանքեր կ'ըլլային, թատերական գործունէութեան միջոցաւ, Լուսաւորչական և Հոռվմէական Հայոց միջին մերձեցում մը յառաջ բերել։ «Նելի Աւարալիր»ն վերջնմեեր վարագոյրին, յանկարծ գուրս կը նետուի էքեւոն, որոն համար կ'ըսուէր թէ վարձուած էր Հասունէն, և կ'սկսի աղաղակել՝ «Հեմ կարող անօթի ոշխատիլ»։ այս մարդիկը մեղի հայր ստակ ալ չեն տարս։ Հասարակութեան մէջէն մնամնեներ ներ կը վազեն, կը խոստանան, կը համոզեն, և ներկայացում մը կ'աւարտի։ բայց որովհետեւ այն ներկայացումը 1860-61ի շրջանին վերջին ներկայացումն էր, հետեւեալ օրու թատրոնը կը փակուի, և տնօրէնը կը վերջացնէ իր գործունէութիւնը։

Արդէն Թատերական շրջանը աւարտած և ստանը հասած ըլլալով, Մաղաքեան կը զատուի խումբէն և դարձնեալ կ'սկսի իր խաղալիկ իւնանքին կօշկակարութեան մէջ։ իսկ մնացեալները՝ Մնակեան, Էջեւան, Աճէմնան, Թասուլեամեան, Թրեանց, Միբասեէտեան։ Լճեցի, Զէրաջի, Աէտէֆեան, Օր. Արուսեակ, քոյրը Օր. Աղաւնի, Տկն. Պայծառ և ուրիշներ կը հրամատին Զմիւնիա, Հայ Վասպուրական թատրոնին մէջ շրջան մը բոլորելու, ուր տեղւոյն Հայ երիտասարդութիւնը արդէն կը ներկայացնէր Միրզա Վաննա դեցիի ողբերգութիւնները։

Խումբը նախապէս փառաւոր. յաջողութեամբ մը կը պանկուի, բայց վերջը Պուճայական խնդրոյ մը պատճառով կը կորմնցնէ իր վիճակը։

Մնակեանի կիւանքին զաւեշտալի մէկ պատկերն ալ հոս կը պարզուի։ 1861-62ի Զմիւնիոյ սոյն թատերական շրջանի միջոցին։ Պրն. Սեփոն Պէղիրճեան համբաւաւոր նկարիչը՝ Զմիւնիոյ նորաշէն եկեղեցւոյն խաչկալը կը պատրաստէր։ Պրն. Պէղիրճեան կը սիրանարուի Օր. Արուսեակի։ Մնակեան ալ իր կարգին կը սիրանարուի Օր. Արուսեակի քրոջ՝ Օր. Աղաւնիի։ Մնակեան կը նախանձի Օր. Արուսեակի՝ Պէղիրճեանի հանդէպ տածած բուռն սէրէն, և կ'ուզէ որ Օր. Աղաւնի ալ զինքը նոյնպէս ջերմօրէն սիրէ։ բայց օրիորդը անտարբեր, մերայիկ անգամ չտար Մնակեանի սիրոյն։ Խումբը արդէն իր վարկը կորմնցուցած, տակաւ կ'սկսի ցրուիլ, և նիւթապէս կարողները ինքզինքնին չոգենաւ կը նեան Պոլիս դաւանալու, իսկ անկարողները Զմիւնիոյ վողոցները կ'սկսին չափչիել։ Մնակեան՝ օրիորդին սէրէն յուսահատած, վրիժառութեան համար կը մտադրէ անոր խաղ մը խաղալ։ Գիշեր մը Մնակեան, Թրեանց, Սէտէֆեան և խումբին համուկիրներէն Զմիւնիոյի վաճառական Ստեփան ազա, որ ւերեւելիք բառը շատ գործածելուն, խումբին անդամները զայն երեւելի Ստեփան ազա կը կամչէին, Զմիւնիոյ Զալկեր Պաշի կոչուած թաղը զինւտուն մը նոտած կը զու արճանան, Խօսակցութիւնը յանկարծ սիրոյ վրաց կը դառնայ և Մնակեան կ'սկսի իբր թէ յուսահատական խօսքեր ընել, և այնչափ լաւ կը կատարէ իր գերը որ քովինները կը հաւտոտան ու կ'սկսին Մնակեանը միմիթարել։ Մնակեան յուսահատութեան վերջին աստիճանին հասած, սիկսուի թուղթով զրափնը պահած ծխախոտի փոշին կը հանէ ու իր գինիի գաւաթին մէջ սրարպելով կ'ըսէ. և Ե՞նաք բարեաւ, բարեկամներս. գաղցէք ըսէք այդ աղջկան որ Մնակեան իրին համար անձնասպան եղաւ և անմիջապէս գինին կը խմէ։ Քովինները խկոյն ձեռքերէն կը բռնեն, Մնակեան թունաւորուածի տանջանքներ ու խիթեր կը կեղծէ, խեղճ Ստեփան աղա շփոթած, իսկոյն դիմացի խանութէն թաս մը մածուն կը հասցնէ. Թրեանց կզակները կը բանայ և Սէտէֆեան գգալով բերանն ի վար մածուն կը լեցնէ։ Խանութպանը որ իր քով Մնակեանի լուսանկարը ունէր, սարսափահար կը պատռէ զայն, և ույս աղան շուտ տուն տարէք խանութէս» կը պոռայ։ Էնկերները կառքով մը զայն տուն կը փոխադրեն, և Մնակեանի սենեկակիցը Պէնէկեան սոսկումով քունէն կ'արթննայ, և եղե-

լութեան տեղեկանալով, իսկոյն բժշկի կը վագէ, երեւելի Ստեփան աղա ալ Օր. Աղաւնիի տունը : Պէնլեան՝ բժիշկը, իսկ Ստեփան աղա՝ Օր Աղաւնին կը բերեն : Թրանսացի բժիշկը, պղտիկ քննութենէ մը վերջ, ինդիրը կռահելով, Մնակեանի ականջն ի վար կ'ըսէ՝ «Vous avez mangé du poisson ou bien du poison ?» Մնակեան կը խնդրէ բժիշկէն որ յսէ : Բժիշկը պարզ օրտիալ մը գրելով այցելագինը կ'առնէ ու կը մեկնի : Իսկ Օր. Աղաւնի անտարբեր նոյսուածք մը կը յառէ Մնակեանի երեսին, և չարաճճրօրէն կ'ըսէ կամաց մը, «Ես այս տեսակ շատերը տեսուծ եմ» ու կը մեկնի : Մնակեան կը մեայ ամենակատարեալ խայտառակութեան մէջ :

Վերջապէս խումբին մեացեալ անդամներն ալ, ամենակատարեալ գօգօգութեամբ, ո և է միջոցով կը դառնան Պոլիս : Մնակեան և ընկերները նիւթեական այնքան նեղ կացութեան մատնուած օրեր անցուցած են որ, ժամանակ ելած է որ իրենց տանաիրոջ հացէն գողցած ու կշացցած են : Բայց նիւթեական այս անյաջողութիւնները դարձեալ վհասեցուցած չէ զիրենք, որովհեան արուեսի սեր կը վառէր իրենց մէջ և ոյժ կուտար անոնց :

Խումբը Զմիւռնիայէն ամբողջովին Պոլիս հասնելուն, Սրեւելեան թարժնի այն շրջանի վարձակալը Սրապիոն Հէքիմեան կը հրաւերէ զիրենք ներկայացումներ տալ, և խումբը 1863—64 շրջան մը կը բոլորէ հոն : Այս ժամանակներուն էքչեան այլեւս հեռացած էր խումբէն, Թրեսնց Զմիւռնիա մեացած և յետոյ ամուսնացած էր : Զէրաջի՝ Ապտուլահ եղբարց գործին մտած, և Թասուլեամեան ամուսնալով Օր. Պայծառի հետ, Ռուսիա Նախիջեւան մեկնած էր : Նախորդ խումբին մեացած էին Մնակեան և Պէնլեան, որոնց եկած միացած էին Աղաւնին, Յակոբ Վարդովիան, Փարագաշեան քոյրեր Օրիորդք Սրաքափ և Աղաւնի Զիրենկիրեան (այժմ Տէկն Պիննէմէճեան) և Տիգրան Մոնճագմեան :

Այս շրջանին խումբին ամենէն յաղթական խազն էր Հէքիմեանի դլուխ գործոց՝ «Աղամ Եւա» ատաղաչափական և «Հարմակ Աւիսէն» արձակ ողբերգութիւնները : Հասարակութիւնը կարծես ստուած էր թատրոնէն, և կազն ի կազը կը վերջանայ այդ թատերական եղանակը : Կը փակուի Սրեւելեան թատրոնը, և Մ. Մանաս, մականուամեալն Քիր, որ արդէն շատոնց քիմը խոթաց էր թատրոնի գործին մէջ, իր բերած երկու վօտիիներովը : «Զարացաւին Աղջիկը» և «Բամիյա», կը վարձէ թատրոնը, և կ'անուանէ զայն Թéâtre Français .

Հետեւեալ ձմեռ, 1864 — 65, այլևս փրանսական օրէրէթներ կը ներկայացուէին : Իսկ Վարդովիան ընկերակցութեամբ Պէնլեանի և Փարագաշեան քոյրերու, մերթ ներկայացումներ կը սարքէին, մանաւոնդ ամառը, Սկիւտար Պողլար Պաշի Աղվիէ լսուած թատրոնին մէջ : Մնակեան թատերական այս տարտամ վիճակին ճարահատած, կը վերսկի իր նախկին պաշտօնին՝ ուսուցչութեան : Իրրեւ չսփազիտութեան ուսուցիչ կ'այցելէր Եյուալ Ա. Եղիս թաղը, Կէտիկ Փաշա և Աղգ . Հիւսնովանոց, Մնակեան մականունը փոխած թէստիւտնեանի, որովհեան եթէ իմացուեր որ Մնակեան՝ դերասան պօզմասի է, տարտկոյս չկար թէ խարազանով կը վանտէին զայն : Այսպէս տարիի մը չափ կ'անցնի :

Կեսարիոյ մէջ աղջկանց վարժարան մը հաստատելու նպատակով, Կեսարացի Մանուկեան եղբարց նախաձեռնութեամբ կազմուած էր Սրամեան ընկերութիւնը : Ուսուցիչ մը և ուսուցչուհի մը պէտք էր : Մանուկեաններու տան մասնաւոր ուսուցիչ Պ. Նիկանովի միջոցաւ՝ Մնակեանի կ'առաջարկուի սոյն պաշտօնը, պայմանաւոր որ ուսուցչուհի մը հետ ամուսնանայ, հետը տանելու համար : Այս պայմանը շատ ծանր կուգայ Մնակեանի, բայց Լուսանոցի Վարժապետեան ներսէ Սրբազնի յօրդորանօք, Մնակեան կ'ընդունի առաջարկը և 1866 հոկտեմբեր 21ին, 27 տարեկանին, կ'ամուսնանայ Սկիւտարէն վարժուհի Օր. Իմաստուհին հետ, և տանողինդ օր վերջ նորապասկ ուսուցիչ ամոյը կը մեկնի դէպի Կեսարիոյ : Մնակեան երկու տարի շատ արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը ունեցած է Կեսարիոյ Աղգ . վարժարաններուն մէջ : Ութը տասոյ չափ աղ Եօզլատ գանուած, և իր վարչական և համոզելու կարպութեամբ, կրցած է աեզւոյն աղգ . վարժարանները ու եկամուանները ազատել բանաւոր մենած աղայի մը ձեռքէն, և վարժարանները բարեկարգելէ վերջ, գարձեալ կը դաշնայ Կեսարիոյ : Մնակեան թէեւ իր պաշտելի ասպարէզէն՝ բեմէն հեռացած, բայց հոգւով ու մտքով միշտ անոր հետ էր, ու պոլսական թերթերու մէջ միշտ թատերական լուրեր կը փնտուէր :

Վարդովիան իր գործը կը շարունակէր Պոլսոյ մէջ : Կարապետ էֆէնափ Փախազեան անուն անձնաւորութիւն մը խորհուրդ կուտայ Վարդովիանի՝ միայն Հայերէնով չբաւականանալ, և Թուրքերէն ներկայացումներ ստրքել : Վարդովիան կը համոզուի և առաջին անդամ ըլլալով, երկար յոզնութիւններէ վերջ, կը ներկայացուի յիշեալ Կարապետ էֆ . Փախազեանի Թրքերէնի թարգմանած Զեզար Պորհիան : Թուրք տարրը կ'սկսի սիրել թատրոնը, և հետզհետէ

կ'սկսին թարգմանուիլ ուրիշ բիէմներ : Թուրք գերասաններ կը մըտնեն գործին մէջ , ինչպէս Անմէտ Նէճիպ , Պէօյիւք Խսմայիլ , եղբայրը Համիտ և ուրիշներ : Հայ դերասաններու թրքերէն արտասանութիւնը ու զղելու համար մեծամեծ ջանքեր կ'ըլլամ . և վերջապէս կը վարձուի Կէտիկ Փաշայի թատրոնը , որուն տեղը կը վերաբերէր Սբրահամ փաշայի , և որ մասնուորաբար Սուլթան Մէժիտ Կայսեր հրամանաւ շինուած էր իր Սիր Ասուլիէի խումբին համար (\*) :

Թուրք գրագէտներ կը մօտենան գործին , ինչպէս՝ Քէմալ Պէջ , Անմէտ Միթնատ Էֆէնատ , էպու Զիյա Թէվֆիդ Պէջ . Նուրի Պէջ , Շաքիր Պէջ (ապա Շաքիր Փաշա) , եղբայրը Ակեան Պէջ , Ֆէհմիր Պէջ , ևն , ևն , Խաղեր կը թարգմանուին ու կը գրուին , զոր օրինակ «Վարան Սիլիսրե» , «Էնեկի Գազա» , «Զավալլի Զօնրզ» ևն , ևն :

Երջանկացիատակ Սուլթան Ապտիւլ Ազիլ Կայսեր ժամանակն է : Եպարգոս Ալի փաշա և ուրիշ պալատական բարձրաստիճան պաշտօնատարներ կ'սկսին թատրոն յանձնիսէ , և գործին յառաջդիմութեան համար միջոցներ որոնել : Վարդովիեան՝ Ալի փաշայի միջոցաւ , առանձնաշնորհում մին ալ ձեռք կը ձգէ , որու շնորհիւ տասը տարուան միջոցին Վարդովիեանէ զատ ուրիշ ուեէ խումբ չպիտի կազմուէր : Առանձնաշնորհաման մէջ միայն կը յիշտին տրամին ու գօմէտին , բայց օրէրէթը զուրս կը թողուի :

Մնակեան՝ Կեսարիոյ մէջ տեղեկանալով այս թատրոնի վերագրղնումին , չուվաններով կը քաչէ իր ուսուցչական պայմանագրին աւարտիլը , և բանտէ փախածի պէս ինքընքը կը նետէ Պոլիս :

Յաջորդ օրն իսկ կը հրաւիրուի մասնակցիլ , Օրթագիւղի մէջ , Պալեան Յակոբ Պէջի հովանաւորութեամբ կազմուած Մաղաքեանի խումբին : Մնակեան առաջարկը կ'ընդունի , և շնորհիւ Պալեան Յակոբ Պէջի աջակցութեան , շատ փայլուն թատերական եղանակ մը կ'անցնեն , ուրիշ վերջ Մաղաքեան իր շահնելիքը շահած՝ դարձեալ կը քաշուի թերա իր խանութը :

Թատերական այս փառաւոր շրջանին մէջ յիշատակիլի է Մաղաքեանի՝ իր նպաստին համար գրած հրաւիրազիրը , և Պ . Ամպերեանի տուած պատասխանը :

(\*) Սուլթան Մէիս Կայսեր հրամանաւ շինուած սոյն բաւրենիր , ապա իր որդույն Ապտիւլ Համիտի հրամանաւ . հիմնայաւսկ խանդրւեցաւ նրեւշ պարանիթերու ձեռնով :

Պ . Մաղաքեանի հրաւիրազիրը՝ զոր հեղինակած էր Պ . Ո . Թղթեան .

Նպաստելով նպաստելոց ,  
Կարօտացայ նպաստի .  
Նպաստեցէք և նուասափս  
ի նպաստ Հայ թատրոնի :

Պրն . Ամպերեանի պատասխանը .

Ցարդ անդադար ընդունելով ,  
Նպաստելոց տոմսակը .  
Կարօտացահնք մենք նպաստի ,  
Շակեցաւ մեր քսակը :

Մաղաքեանի քաշուելուն վերջ , մնացած գերասաններն ու գերասանուհիները կը միանան Վարդովիեանի խումբին և կը կազմուի բազմամարդ խումբ մը : Ամոլք Ֆասուլեամեան , Անմէտ Նէճիպ Խսմայիլ , Համիտ , Պէնլեան , Յ . Աձէմեան , Լէնցի , Գարեգին Ռշտունի , Թագւոր Նալեան , Խաչիկ Փափազեան , Գառնիկ Կիւմիւշեան և ուրիշ գերասաններ . ինչպէս նաև Գարագաչեան քոյրեր . Չուհանձեան թէրէզա և Աննիկ քոյրեր , Օր . Հերանոյշ , Օր . Վերժին և Թեֆար Պաղտատեան , ևայն , ևայն :

Սուլթան Ապտիւլ Ազիլ Կայսեր ժամանակ , չզիտցուիր քաղաքական ի՞նչ պատճառով , Քէմալ պէջ և ընկերներէն շատերը , Կէտիկ Փաշայի թատրոնին մէջ ձերբակալուելով աքսորուած էին :

Տարի մը վերջը Ֆասուլեամեան չկարենալով հանդուրժել Վարդովիեանի լուծին , և առանձնաշնորհի կապէն ազատելու համար , կը հաստատէ առանց յուշաբարի ներկայացման դրութիւնը , «Թիւլաք» կոչուած , և Գօմիք Համարի էֆէնատի և ուրիշներու ընկերակցութեամբ կ'սկսի ներկայացումներ տալ Ղալաթիոյ կազմը :

Ժամանակ մը վերջ Ֆասուլեամեան դարձեալ կը թողու Պոլիսը , և իր կնոջ , Օր . Մաոի Նուարզի , քոյրը Օր . Տիւրիւկի յիտոյ Տիւկին Սանճագձեան) և Պ . Աղամենանի հետ կը մեկնի Ռուսիա :

Վարդովիեանի խումբին բեմիսկօրներն էին այն ատեն նոջի Հայր և որդի : Խումբին գերասանները արտեստի մասին շատ ու շատ բան կը պարանի այս ժրաշան ուսուցիչներուն :

1876ին Պարտնայք Եղիազար Մելիքեան և Զուհամեան Օբէրէրի խումբ մը կազմելով , սկսան պատրաստել «Զին Զիջէկի» , «Լէալէպի-

նի Հօրիօ Աղա», «Արիֆին Հիլեսի» անուն օբերեները, և, նոյն տարուան թամազանի ամսուան համար, Սպարտպետութեան Դրան դիմաց Միսաֆիրանէի Ասկէրիէի ախոռը վարձելով և թատրոնի վերածելով, նիւթական շատ փայլուն յաջողութեամբ մը ներկայացումները տրուեցան:

Վարդովեան՝ օբերերի խումբին այս ահազին յաջողութենէն ու դողի մասնուած, ինք ալ սկսու այդ ճիւղին, «Պէլ Ելեն»ով: Բայց այս սկզբունքը Վարդովեանի փորձանքը եղաւ. քանի շարունակեց օբերեները, «Մատամ Անլօ», «Օրֆե», «Պրիկան», «Փրօնելի Փրօնիա», ևն . . , ինքն ալ տատիճանաբար կործանեցաւ:

Խուսական պատերազմէն յետոյ, երբ Խուսերը Ադրիանուարուիս եկած էին, Պէնլեան օբերէթներու թարգմանութեան օրինակները և բարթիսիօնները գողցած, Մնակեանն ալ հրաւիրելով, կ'երթաւ Ադրիանուապոլիս, միասին առնելով Օրք. Գարագաչեանները, Օր. Գոհարիկը, Թրեանցը և ուրիշներ: Սանցմէ առաջ Ադրիանուապոլիս գացած էին արդէն Օրք. Սատղիկ և Սիրանոյշ քոյրերը, Օր. Հրաչեայ, Սիսոկ և Սնառն Ռշտունի:

Վարդովեան թէն ասդին մէկ քանի հոգիով մնացած, դարձեալ գործ կը շարունակէ:

Ադրիանուապոլէն վերադարձն Մնակեան դարձեալ կը միանայ Վարդովեանի, որ կէտիկ Փաշայի թատրոնը թողած ու Տիրէքլէր Սրասի քաշուած էր:

Բայց արամաթիք ճիւղը շատ անկեալ վյժակի մէջ էր այլես, որովհետեւ ֆասուեանեանի նսարած թիւլար ճիւղը փայլած, Ապտիներ յառաջ բերած և Թուրք հասարակութեան շատ հաճոյալի դարձած էր: Թատրոնը իր նախսին փայլը կորսնցուցած էր այլես:

1879ին Կովկասանայք արդէն սկսած էին Հայ թատրոնի գործունէութեան, և իրենց աեղական ոյժերուն քով Պոլիսէն հրաւիրած էին նաև Օրք. Սատղիկ և Սիրանոյշ քոյրերը և Պ. Աղամենան:

1880ի ամառը՝ Պոլիս կուգայ Տիրիսի Թատերական մասնախումբի անդամներէն Պ. Արգար Յովհաննէսինց, արտօնատէր և հրատարակիչ «Արձագանք» թիրթին. և Տիրիս կը հրաւիրէ Մնակեանը, Տիրիս Հրաչեայի և Գարագաչեան քոյրերուն հետ, որով Տիրիսի տեղական ու Պոլսական ուժերովը կ'ունենայ զօրաւոր խումբ մը. արդարե նախանձելի գործ: Թատրոնին տնօրէնութիւնը կը վարէր Իշխան Ամատունի:

Կովկասի թատերասէր հայութիւնը, ամէն մասամբ չափազանց

խստապահանջ, քիչով չի գոհացող, կը փափաքէր որ խումբը՝ Ուսուարուեսագէտներու հետ մրցի: Մնակեան այս սոսկալի խստապահանջութենէն շուարած, և այս աստիճան խստապահանջ ու միանգումայն հասկցող հասարակութիւնը կարենալ գոհացնելու համար թափած ճիպերէն ու յոգնութենէն հրւանդացած, ճարտահատ կը մտագրէ գալսնաբար կծիկլ դնել: և իրօք ալ օր մը մնառուկը շալկած, գաղտազողի կ'իջնէ Բօթի. բայց հազիւ չոգեկատքէն իշած, պաշտօնեայ մը կը մօտենաց իրեն և կատարեալ գաղագալարութեամբ, իսկոյն Տիրիս վերագանակու խորհուրդ կուտայ: Մնակեան այդ գիշերը հսկողութեան տակ անցնելէ վերջ, առատուն կանուխ կը գաւնայ Տիրիս: Ընկերներէն ոչ ոք եղելութիւնը գիտէր բացի Իշխան Ամատունինը, որ Մնակեանի վերագարձը տեսնելով, կը մօտենայ և քմծիծալով մը կ'ըսէ Մնակեանին թէ՝ ամսականը 50 րուպի աւելցած է:

Այդ գիշերը երբ Մնակեան բեմ կուգայ, հասարակութիւնը ծափանարութեան ահազին գուռումով մը կ'ընդունի վճնքը, չզիտցուիր ինչո՞ւ: Եւ Մնակեան երբ հիմա այս դէպքը յիշէ, կ'աւելցնէ թէ՝ «Զեմ գիտեր թէ ի նշան խայտառակութեան, թէ շնորհակալութեան էր այդ փուռն ծափանարութիւնը»: Մնակեան այդ տարին Տիրիսի մէջ տուած նպաստին, իբր նուելը ստացած է մեծկակ ուկի ժամացոյց մը, շղթայով միասին, կուրծքի և թեւերու կոճակի կազմ մը, համակ արծաթէ թէյի սկմավերի սպաս մը, բաւական կլորիկ գումար մը, ուրիշ նուելներ և հնտեւեալ ձօնը.

## ՏԱՂԱՆՆԻԱՐԱԿՈՒՐ ԳԵՐԱՍԱՆ

### ՄՆԱԿԵԱՆԻ

Հայկական թատեր գարդ Մնակեանին,  
Մեր ասղանդաւոր այս մեծ դիւցազին,  
Խմբովին ահա Տիրեաց համայն Հայք,  
Տալիս են իւրեանց ևռանդուն յարգանք:

Այս՝, արժան էք հանճար Մնակեան,  
Վայելել ասատ մեր սէրն ու զրկանք,  
կը սիրենք ըզձեղ սիրով հարազատ,  
Էզձեղ Հայկական մեր թատրոնին զարդ:

Կեցջիք դուք ընդ միշտ այդ մեծ համարով,  
Կեցջիք գովանի անուան պարծանքով,  
Տիկնեաց Հայ խռոմբը կը կապէ պատկ,  
Զեր պայծառ ճակտին իբրև իւր պարծանք :

Եւ 'ի վստահ ձայն,  
Կ'երգէ յաւիտեան,  
Կէցցէ Հայ թատրոն,  
Կէցցէ Անակեան :

Տփղիսի թատերական եղանակը՝ աւարտէլէ վերջ, Մնակեան աւարտը անցնելու համար Պոլիս կուգայ, և Բամագան ամսուան պատահեռով, Եահզատէ Գուշլի կողմը իր հին ընկերներուն հետ աշխատելէ վերջ, կը վերադառնաց Տփղիս, Մարի Նուարդի և Սանձագծեանի հետ, 1881—1882ի շրջանը անցնելու : Նոյն փառաւոր ընդունելութիւնը, նիւթական նոյն յաջողութիւնը՝ վայլուն նպաստ, նուերներ, ևն. ևն. Այս շրջանին մէջ Մնակեան հելինակած ու երգած է. Հերիք Որդենակ» երգը «Լեւլեպինիր», «Թիւ Տեօր օվլու»ի եղանակին վրայ, և այս պատճառաւ Մնակեան՝ երկար արքիներ անդողի մէջ ապրած է, բարեկամներու լուսական գործականութեան մասին պատճառաւ:

Սուաջին եղանակին խոռոքը Տփղիսի մեջ սկսած է «Քարթուարժանեցներ»ով, Լիւսի Տիտիկ»ով, իսկ յաջորդ երկու շրջաններուն ներկայացուցած է «Օքելլօ», «Համիկա», «Աւազակինեց» ևն. այնքան յաջողութեամբ որ իրաւումբ Բուռ Արուեստապէտներու հիացման արժմանացած է:

Պայմանագրուած երեք տարրուան շրջանն աւարտելուն խոր մըք կը դառնայ Պոլիս, բացի Պ. Ադամեանէ, որ Տիգրիս կը մնայ: Մնակեան միշտ հիացմանիր կը խօսի ցարդ Կովկասահայոց թատերական գործունէութեան մասին, և մասնաւոր երախտադիտութեամբ՝ ու գովկատով կը յիշէ մահաւանդ երկու ազնիւ անձնաւորութիւններ՝ Պարունայք Ամերիկեան, և Զմէկեան, որոնք Կովկասի Հայ բնուին անձնուէր Հիննադիրները եղած են:

Թալիքանէի այժմու Սիրքին տեղ շնուռած Croissant թատրոնին մէջ օբէրէբներու սէզօն մը կ'անցնէ : Մնակեան փայլուն յաջողութիւն մը ունեցած է ի մէջ այլոց . «Լեպիկալինի Հօր Հօր Ալպ»ի մէջ Լեպիկալինի և «Արքան Հիյսսի»յն մէջ Արքիֆի դերերուն մէջ :

Ժամանակ մը վերջ օքէրէթի այս խումբը կ'անցնի Եգիպտոս, ուր հասարակութենէն ահագին ընդունելութեան կ'արժանանայ և մինչև իսկ Խտիլին մասնաւոր գնահատման առարկայ կ'ըլլայ: Մնակեան մանաւանդ շատ փայլուն ու շոշողուն գնահատման ու սիրալիր վերաբերման կ'արժանանայ թատերասէր հասարակութենէն. իր ներկայացուցած «Փիռօֆիկ Փիրօֆլայի» մէջ «Պօլէրօնի, «Օրթե»ի մէջ «Բիլթօն»ի, «Մատաւ Անկօ»ի մէջ «Բօնիրսնէ»ի դերերով: Մնակեան՝ ի պատիւ իրեն տրուած ներկայացման նիւթական ահագին յաջողութեամբ պստկուած և նուէրներ ստացած է: Ներկայացուած խաղն էր «Առամինուրին նոր կր յաղբուի» անուն յուզիչ տրամար:

Եգիստոսէ վերադարձին, Մանկեանի խումբը, որուն անդամներէն էին Սիսակ. Ալիքսանեան, Հօլաս, Չափրաստ, Աչքէրեան, Չօպանեան, Մաթոսեան, Նուրի, Ահմէա Նշճիպ, Եալտըզճեան, յուշարար՝ Գալֆաեան, գործակտար՝ Լենցի, Օր. Մարի Նուարդ, Հէքիսեան, Մաթենիկ, Ոֆէլիա և յետոյ Տէր և Տիկին Պիննէմէճեան:

Ապրիլ պէտք էր, ուստի խումբը սկսաւ անխոնջ աշխատովթեան .  
ամէնէն առաջ նկատի կ'առնուի հասարակութեան ճաշակը, և Ռօ-  
մանքիկ ճիւղը յարմարագոյնը նկատուելով . Մնակեան կ'սկսի զօրա-  
ւոր ու ցնցիչ խողիքու թարգմանութեան : Մնակեան երկու հարիւրէ  
աւելի թարգմանութիւններ ունի, ոօմէտի և տրամ:

Այս միջացին Կայս.Պալտասոն մէջ սկսան ներկայացումներ տրուիլ Վարդովինանի զեկովարութեամբ. Մնակեանի թարգմանութիւններէն ։ Ժամանակ մը վերջ պալատական խումբին և Վարդովինի միջև զժառ թիւն մը իշխալով, Ապահւը Համբայի հանդերձապիտ իրիա Պէյի հրամանաւ. Պալատի դերասաններու դերուացյ կ'ընտրուի Մնակեան։ Այս պատճառով նոր թշնամութիւնն մը կը ծնի Վարդովինանի մէջ՝ Մնակեանի հանդէպ և Վարդովինան կ'ակսի Մնակեանի թարգմանած կամ ներկայացուցած բիէմներու մասին հաղար տեսակ խեղաթիրումներով յեղուն Փռւնայներ տալ։

Գրաքննութիւնը որ արդէն բիէմներուն հօգին կը հանէր, ա՛յ աւելի խստօրէն կ'սկսի ի զործ զրուիլ, ալ բառերն անդամ սահմանափակուեցան. բիէմներուն մէջ քուական չմնաց, անցեալը մոռցուեցաւ, Արդարութիւն բառը անհնատացաւ, ծեր, քիր բառերը չնշուեցաւ.

յան։ Բիէմները նախապէս միայն գրաքննական տեսչութեան բովլն կ'անցնէին, բայց անկէ վերջ իրեւ քաղաքական գատապարեալներ Ոստիկանութեան Դուռն ալ սկսան զրկուիլ։ Գրաքննիցներէն բիէս մը կարենալ ազատելու համար հարկ էր անպատճառ գրամական նուէրներ, աւելի ճիշտ բառով կաօալք տալ. բիէմին համեմատ երբեմն մինչեւ քսան ուկի հարկ էր տալ մէկ բիէսի համար։ Մանաւանդ Ոստիկանական Նախարար տիրառնչակ Շէֆիք Փաշայի ժամանակ։

Մնակեան երբեմն դասնորէն կ'ըսէր, «Մուրալը կամ անօթութեանէ մեռնիլը այս վիճակէն հազար անգամ նախամեծար է, բայց ի՞նչ օգուտ, գործին մէջ Ս.Ռ.Ռ.Ի.Ե.Ս.Տ.Ի. իւն.թ.Ա.Ի.թ.ի.ի.ն կայ»։

Մնակեանի՝ հասարակութենէն վայելած համակրանքն փառքէն նախանձելով, անգամ մը իր ընկերները լքեցին զինքը, չմոռնաւով թատերախաղերուն օրինակները գողնալ։ Մնակեան առանձին մնալով, կը միանաւ Քիւչիւք Իսմայիլի հետ, պայմանով որ գործին մէջ զանբօնի չգտնուի։

Այդ միջոցին մուավեները ագլիյէ խոստայող անձնաւորութեան մը խորհուրդին անսալով, Քիւչիւք Իսմայիլ կ'ուզէ օբերերի սկսիլ։ Մնակեան՝ Վարդովեանի վիճակը օրինակ բերելով, իզուր կը ջանայ համոզել որ ետ կենայ օբերերի նպատակէն, բայց մուալենէրը ազլիյէն կը պնդէ և վերջապէս «Գարմին»ի փորձերը կ'սկսին։ Իրեւ բրիմատօն՝ Գոհարիկ Շիրինեան և իրեւ բենօն՝ Ակաեան և Վահան Շահինեան խումբին միացած էին։

Կարենալ գերակատարները կշտացնելու և փորձերը շարունակելու համար, Իսմայիլ էֆէնտի՛ Տիրէքլէր Արարի թատրոնին կից, Անմէտ աղա անուն խոհարար մը ցոյց տուած էր, ուրիշ՝ մինչեւ օբերերին ներկայացման օրը ուղղող ապատիկ պիտի կրնար ճաշել։ Մէկ, երկու, երեք, չորս շաբաթ, տակաւին «Գարմին» պատրաստ չէր։ Խողճ Անմէտ աղա ա՛լ չկրնալով ապատիկի հանդուրժել, օր մը թատրոնին գրան առջև անսպին ձայնով «Նե՞րինէ դալը, զարմէն մի Տիր, նե ալլահին պելասը Տր, տահա կէլլայենէ մի, պու զահպէ» կը պուայ, դբազդաբար Գոհարիկ Շիրինեան ալ նոյն պահուն հոն ներկայ էր։

Վերջապէս Գարմինի փորձերը կ'աւարտին, ներկայացումները կը սկսին։ Երաժշտական խումբը, որոնք վարպետ Իտալացիներ էին, իրաւամբ կը զարմանային այս ձայնագրութենէ զուրկ խումբին յաշողութեանը. սակայն հասոյթը ոչինչ, երկրորդ անգամ նոյնը, երրորդին ոչնչացոյն։

Առառու մը Մնակեան կը տեսնէ որ համբաւաւոր երգչուհի Օր. Բերուղի մնառուկը թատրոնէն ներս կը մտնէ, գործը կուհնելով ինք ալ իր մնառուկը թատրոնին ետեւի դունէն կը հանէ ու կծիկը կը դնէ։

Մնակեանէ բաժնուած ընկերները, որոնք Պրուսայէն դարձած էին, նորէն կը միանան Մնակեանի, և խումբը կը վերակազմնն Ա՛ւ ժողովուրդը տրամներու սիրահար. ամէն աեղ ամէն քաղաքի մէջ կը պատուէր խումբը։

Ժամանակ մը վերջ երկրորդ քայլքայում մը, նորէն միացում, վերջը երրորդ քայլքայում մը, և Մնակեանի հետ կը մնայ խումբին կէսը։ Մնակեան իրեններավ կը մեկնի Խզմիր, իսկ հերձուացող մասը կ'երթայ Սելանիկ։ Սէզօն մը վերջ, երկու քայլքայեալ խումբերը Պոլիս գառնալնուն կը ձուլուին, և սուուր ոյժով մը Մնակեան կ'երթայ Պրուսա Բէշիա փաշացի (ապա Պոլսոյ հաղախապես) կուսակալութեամ միջոցին։

Մնակեան հոն տկարանալով, քանի մը ներկայացման չմամնակցիր։ «Մանզումէի-Եֆքեար» լրազրի խելացի թվթակիցը, Մնակեանի ընկերներէն մէկին կատակէն խափուելով, խսոյն Մնակեանի մահուան գոյժը կը հաղորդէ իր թերթին։ Լուրը խսոյն կը տպուի թերթին մէջ, Մնակեանի կենսագրութիւնը կը գրուի, Թուրք ու Յոյն թերթեր գոյժը կ'արտաստպին, և յաջս ամեննեցուն Մնակեան փառաւորապէս կը մեռնի, և ահագին թիւով ցաւակցական ու միթթարական նամակներ ու հեռագրեր կը աեղան Մնակեան տիկնոջ ու որդիին։ Յուղարկաւորութիւնը անսպատճառ Պոլսոյ մէջ կատարուելու համար հանգուցեալ. . . Մնակեանի մարմինը Պոլիս բերուելու մասին կը հետքրուի Մնակեան Որդիի, և մինչեւ անգամ այս առթիւ Կարգադիր մասնախումբ մը կը կազմուի խսոյն։ Ի վերջոյ իրողութիւնը կը պարզուի, և Մնակեան Յարութիւն կ'առնէ։

Քաղաքապէտ Բըտվանի Փաշա սաստիկ բարկացած էր իր որդւոյն Բէշատ պէտի գէմ, վասն զի Բէշատ Պէտ թատերասէր մը, թատրոնի մոլի մ'էր, ու հակառակ իր հօր կամքին ու արգելքներուն, երբեմն խումբ կը կազմէր. Ֆարս Ֆրանսէկ կոչուած զօմէտիները ներկայացնել տալու համար։ Քանի քանի անգամներ Բէշատ Պէտի պատճառաւ, գերասաններ սակայի սպառնալիքներու, մինչեւ իսկ ծեծի հնաթարկուած են Բըտվան Փաշայի կողմէն։ Վերջապէս Բըտվան Փաշա ա՛լ յուսահատած իր գաւակը ուղղելէ, ո և է պատրուակաւ թատրոնները փակելու դժոխային գաղափարը յղացաւ, և իր թէ Օսմ.

Թոտարոնը բարեկարգելու նպատակաւ, ժուռանալով մը դիմեց Առւշիան Համիախ, և Թատրոններուն Պոլսոյ մէջ փակման իրատէն ըստացաւ: Խումբերը ճարանատ դիմեցին գտաւաները, և չուրջ երեք տարի աստանդական թափառեցան: Շատեր իրենց տան կարասիներն անգամ ծախեցին, հայի գրամ ընելու համար:

Օր մը լուր երաւ թէ՝ Ծըսլան Փաշա սպաննուեցաւ. և Պրուսյի Կուսակալ Բէշիտ Փաշա քաղաքապետ անուանուեցաւ: Բէշիտ Փաշա թատրոններու վերաբացման արտօնութիւնը ստացաւ և խումբերը թափեցան Պոլսոյ, ու սկսուն գործի, բայց միշտ սահմաններու ան ու դոզը, սոսկալի ուրուսականը դերասաններու երեւ ակայութեան առջեւ:

1908ին ամառ գիշեր մ'էր, Օգոստոսի մէջ, խումբը Մաքրիգիւղի թաղապետական թատրոնին մէջ ևստամ օ Գամելիս կը ներկայացնէր: Մնակեան՝ երրորդ արարին, դերը աւարտելէ վերջ, պանդոկ երթալու միջոցին, մութին մէջ ճամբան կը չուարի. և պարտէլին եղերքէն, մէկ երկու մեթր բարձրութենէ վար կիյայ ճամբուն վրայ ու կ'սկսի ցաւէն պիտուալ: Մնակեանի հօլ որ Ֆամիլը կոտրուած էր: Մնակեան Որդի և ուրիշներ կը համին ու Մնակեանը կը փոխագրեն մօտակայ տուն մը, և յաջորդ աւտուն անմիջաւաչս Ազգ Հիւանդանոց: Հոն ի ներկայութեան Պոլսոյ ամենէն ականաւոր բժիշկներու, կը կատարուի ստքին քննութիւնը, և միաձայն կ'որոշուի որ ուստի սոկորը վեասուած չէ: միայն վիրաբուժապետ տաքիթ: Զարդարին սոկորը վեասուած չէ: միայն վիրաբուժապետ տաքիթ: Զարդարեան էֆի. հօլ որ Ֆեմիլը սոկորին ճաթած լրալուն վրայ կը պընդէ, և մինչեւ իսկ, կարծես ուօնիղիեն ի զօրութիւն ունեցող աչքերով տեսածի պէս, մատիսով պատին վրայ կը գծէ սոկորին ճաթած ձեն ու չափը: Եւ Մնակեանի աջ ստքը մինչեւ մէջքը կ'առնուի քածի մէջ: Զարդարեան իր քննութեան վրայ կը պնդէ, իսկ միւսները, որոնք Պոլսոյ ամենէն առաջնակարգ Հայ բժիշկներն էին, կը պնդեն թէ կոտրած չէ: Հայ թերթերու մէջ, ծանօթ ու մամադ գէտ բժիշկներու և տօքիթ: Զարդարեանի միջնէ կ'սկսի ահապին պայքար մը: Քառասուն օր վերջ կը քակուի Մնակեանի ստքին քաճը և հետաքրքիրներու և մասնագէտներու հետաքրքրութեան ու վիճարանութեանց վերջ տալու համար, կ'որոշուի ուզգակի Ռէօնդիէնեան մեքնայով Մնակեանի ստքին լուսանկարն առնել: թէ՛ կիւլհանէի, թէ՛ Ֆրանսական հիւանդանոցներու և թէ՛ Գերմանական մասնաւոր հիւանդանոցի մը մէջ կը լուսանկարու Մնակեանի ստքը, և տօքիթ: Զարդարեան յաղթապանծ դուրս կուգայ իր պնդումին

մէջ, և Տօքիթ Զարդարեանի պատի վրայ գծածն ու Ռէօնդիէնեան կարգան լուսանկարը կէտ առ կէտ համապատասխան կուգան իրարու: Մէ՛ տօքիթ: Զարդարեանի փառաւորումը չափ ու սոհման չունէր: Մնակեան՝ առանց մէկ սանդղիմէթր տարրերութեան, ողջ ոտքով նորէն երեցաւ բեմի վրայ: Աներեակայելի էր ժողովրդեան բազմութիւնն ու խրախճանքը երբ առաջին անգամ Մնակեան երեցաւ բեմին վրայ: Մնակեան յարդ անհուն չնորհակալութեամբ ու երախտիքով կը յիշէ Վարպետ Տօքիթօրին՝ իրեն նկատմամբ ցուցուցած խնոմքն ու հոգածութիւնը իր հիւանդութեան միջոցին: Մասնաւոր չնորհակալութիւն կը յայանէ նաև Ազգ: Հիւանդանոցի Պատ, Հոգաբարձութեան Անդամոց և յարգելի պաշտօնէ ութեան, որոնք չարունակ իրեն կ'այցելէին, և իր հանգստութեան համար բան չէին ինսայել:

Վերջապէս կը հասնի Ազատութեան օրը, գերասանները շունչ կ'առնեն: Բայց անողոք մահը վրայ հասնելով, կ'առնէ կը տանի խումբին զօրաւոր տարրերէն մէկ քամին:

Ազատութեան հետ սկսաւ ամաթէօրներու ժխորը. և թատերական գործը փոխանակ աւելի բարձրանալու հետզհատէ ինկաւ ստորին աստիճանի:

Մնակեան միայն արւեստին գործնականին տեղեակ չէր, այլ ուսումնասիրած էր տեսական մասը: Ուսումնասիրած էր Բարիզի Գոնկրվաթուասի թատերական ճիւղին դարպնիացքը, ուսումնասիրած է Մեծ Վարպետաներու՝ թատերական արսեստի վերաբերեալ երկերը, քննադասութիւնները, Փրանսական բէրէրթուատին երկդարեայ գործերը: Թատերական գործի հնատամուտ ու սիրահարներ Մնակեանի համար կը վկայեն թէ՝ ֆրանսական բէրէրթուատը մազած է: Մնակեան յարդ կատարեալ կորովով ու առանց յոզնութեան գիշեր ցորեկ կը կարգայ ու կը թարգմանէ ֆրանս թատերակարի, իր վասակածին մեծ մասը կուտայ թատերական գործերու:

